

«1991 ստորաբաժանման» նախապատրաստական դասընթաց

«1991 ստորաբաժանում»

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը (FAST), ՀՀ պաշտպանության նախարարությունը և «Հայ Տեք» կիբեռանվտանգության կենտրոն հիմնադրամը 2019 թվականի սեպտեմբերին ստորագրել են **փոխըմբռնման հուշագիր՝ համագործակցելու «1991 ստորաբաժանման» շրջանակում:** Այս եզակի ստորաբաժանման հմուտ պինծառայողները ռազմավարական և մարտավարական առաջադրանքների կատարման համար կստեղծեն **առաջադեմ տեխնոլոգիաներ,** որոնք ՀՀ Զինված ուժերի համար մեծ պահանջարկ ունեն:

Ծրագիրը հաջողությամբ իրականացնելու համար FAST-ը կազմակերպում է

- Նախապարագային կրթական դասընթացներ ՀՀ բոլոր մարզերում
- Կրթական դասընթացներ «1991 ստորաբաժանում» ընդունված պինծառայողներ համար նրանց հանձնարարված հետազոտության և մշակման (R&D) նախագծերի կարիքներին համապատասխան

«1991 ստորաբաժանման» նախապատրաստական դասընթաց

FAST հիմնադրամի «1991 ստորաբաժանման» նախապատրաստական դասընթացն ապահովում է մրցակցային կրթության հնարավորություններ զորակոչի ենթակա տղաների, ինչպես նաև այն աղջիկների համար, ովքեր ունեն ԳՏՏՄ ոլորտի առնվազն բակալավրի աստիճան և դասընթացն ավարտելուց հետո պատրաստ են ներգրավվելու ՀՀ ՊՆ առաջադրած նախագծերում կամավոր կամ պայմանագրային հիմունքներով: **6-ամյա անվճար դասընթացի** ընթացքում մասնակիցները ձեռք են բերում գիտելիքներ տվյալագիտության և արհեստական բանականության ոլորտների վերաբերյալ, որի շնորհիվ նրանք առավել պատրաստված կլինեն ծառայության անցնել «1991 ստորաբաժանում»-ում: Դասընթացները պարբերական են. մեկնարկում են յուրաքանչյուր գորակոչից **6 ամիս առաջ:**

Առավելություններ

Ծառայության ընթացքում երիտասարդները ձեռք կբերեն գործնական գիտելիքներ և կկարողանան նպաստել գիտական առաջընթացին և բարձր տեխնոլոգիական ոլորտի վարգացմանը՝

- աշխատելով ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներում
- աշխատելով բարձր տեխնոլոգիական ընկերություններում
- ներգրավվելով հետազոտական լաբորատորիաներում
- ձևավորելով սեփական ստարտափը

Ծանոթացեք «1991 ստորաբաժանման» նախապատրաստական դասընթացի բոլոր մանրամասներին: Նախապատրաստական երկրորդ դասընթացի դիմումներն ընդունվում են մինչև **հունիսի 8-ը** ներառյալ: